



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

**«ԱՌԱՋՆ ԿՅԱՏԵԼՈՒ ԱՂՕԹԵԼՈՎ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ ՇԵՆՑՆԵՆՔ
ՀԱՄԱՔԱԿԱՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՄԲ
ՀԱՍՆԻՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԲԱՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻՆ»**

Պատգամեց Առաջնորդ Սրբազանը

Կիրակի, 3 Ապրիլ, 2011-ին, Սրբոց Քառասնից Մանկանց տոնին եւ եկեղեցւոյս անուանակոչութեան առիթով Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Սուրբ Պատարագ մատոյց եւ իր հոգեշունչ պատգամը փոխանցեց եկեղեցւոյ մէջ համախմբուած հաւատացեալ բազմութեան, կարեւորելով աղօթքին անհրաժեշտութիւնը մարդ անհատի եւ յատկապէս հաւատացեալի կեանքէն ներս, իբրեւ միջոց եւ կռուան վերանորոգութեան, եւ մարդուն մէջ հաւատքի կեանքի ամրապնդման ու անով՝ Աստուծոյ հետ հարազատ կապուածութեան:

Ս. Պատարագի ընթացքին Սրբազան Հօր առընթերակայ էին Զրիստոնէական դաստիարակութեան վարիչներէն՝ Հոգ. Ս. Պարթեւ Կրդ. Կիլիկիմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Ս. Հրանդ Ա. Քին. Երեցեան: Ս. Խորանին սպասարկեցին եկեղեցւոյս սարկաւազները, իսկ երգեցողութիւնը ներդաշնակութեամբ կատարեց Դպրաց դասը, ղեկավարութեամբ Պրն. Արամ Աղապապեանի:

Նախքան իր քարոզը Սրբազան Հայրը գոհութիւն եւ փառք յայտնեց Աստուծոյ, որ անգամ մը եւս կը գտնուի Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ համայնքին հետ, հրաւիրելով բոլորը աղօթելու աշխարհի խաղաղութեան եւ բարօրութեան համար:

Սրբազանը քարոզի բնաբան ընտրած էր Ս. Քառասնից Մանկանց Նուիրուած շարականի հետեւեալ բառերը.- «Ո՛վ սուրբեր եւ Զրիստոսէ սիրուածներ, աշխարհի լուսաւորիչներ, սուրբ եկեղեցւոյ պարծանքներ, Տիրոջ մօտ մեզի համար բարեխօսեցէք»: Ապա անդրադարձաւ նուիրական այն մեծ հաւատքի կեանքին, որով ապրեցան 4-րդ դարուն իրենց հաւատքին մէջ անպարտելի եւ Աստուծոյ հանդէպ հաւատարիմ Ս. Քառասնից Մանկանց այդ մեծ ախոյանները, որոնք Սեբաստիոյ Լիւսիաս հազարապետին հրամանով եւ օրուայ դատաւոր՝ Ակրիկողայոսի որոշումով

նահատակուեցան, Սեբաստիոյ քաղաքի լիճին մէջ, 9 Մարտ 316 թուականին:

Իր խօսքը շարունակելով Սրբազան Յայրը կարեւորութեամբ շեշտեց, որ Սեբաստիոյ լիճը Քառասուն Մանկանց համար եղաւ հոգեւոր այն Մկրտարանը, որուն մէջ անոնք իրենց տառապանքին մէջ կրցան տեսնել այն մեծ Լոյսը, որ լուսաւոր պսակներ հանգչեցուց իրենց վրայ, որ արեւի ճառագայթներուն նման կը ջերմացներ գիրենք՝ հակառակ լիճին սառոյցին: Անոնք իրենց աչքերը երկինք բարձրացնելով՝ տեսան անմարելի յոյսը՝ Քրիստոս, որ կը խրախուսէր գիրենք իրենց հաւատքին մէջ անխախտ մնալու: Այդպիսով՝ արժանացան անմահութեան եւ փառաց պսակին: »Քառասուն Մանկանց նահատակներու նման մե՛նք եւս կոչուած ենք հաւատքի մեր կեանքը ապրելու եւ շինարար ոգիով շէն ու պայծառ պահելու մեր հաւաքական կեանքը, միշտ աղօթքի ճամբով Աստուծոյ հետ հաւատարմութեամբ քալելու, մեր ուխտը վերանորոգելու եւ սրբակենցաղ ապրելակերպով մեր կեանքը շարունակելու«, ըսաւ Սրբազան Յայրը:

«Պատաւորի» Կիրակիին մեզի փոխանցած պատգամն ալ այդ կը թելադրէ, որ յարատեւ եւ առանց ձանձրանալու աղօթենք: Յետեւաբար օրուան խորհուրդով լիցքաւորուած, Սրբազան Յայրը պատգամեց որ հաւատացեալի կեանքին մէջ անհրաժեշտ է որ աղօթքը դառնայ ազդու միջոց մեզ բոլորս սրբելու, մաքրելու, մեզ հոգեպէս Աստուծոյ հետ հարազատ կապուածութեան մէջ պահելու եւ մեր բոլոր խնդրանքներն ու բարի ցանկութիւնները իր կամքին յանձնելու եւ յոյսով սպասելու անոնց արդար լուծումին:

Եզրակացնելով Սրբազան Յայրը, Ս. Քառասնից Մանկանց նուիրուած շարականի բառերով Սուրբերու բարեխօսութեան դիմելով, աղօթեց. «Այսօր կը տօնենք յիշատակը քաջ եւ յաղթող վկաներուն, որոնք դիմադրելով հերքեցին անօրէն կռապաշտութեան մոլութիւնը, բարեպաշտութեամբ Քեզ դաւանելով միասնական սուրբ Երրորդութիւն»:

Յաւարտ Ս. Պատարագին, կատարուեցաւ Յոգեհանգիստ՝ Եկեղեցւոյ հանգուցեալ բարերարներուն, հոգաբարձուներուն եւ բոլոր համեստ ու նուիրեալ սպասաւորներուն հոգւոց խաղաղութեան: Ապա, Սրբազան Յայրը շրջապատուած առընթերակայ հոգեւորականներով եւ դպրաց դասի անդամներով առաջնորդուեցաւ Եկեղեցւոյս «Ղուկասեան» սրահը, ուր, կազմակերպութեամբ Եկեղեցւոյ Տիկնանց միութեան եւ մասնակցութեամբ հոծ բազմութեան, կատարեց օրհնութիւնը եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ պատրաստուած մատաղին:

Կէսօրին, ուխտաւոր հաւատացեալներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Ճաշի ընթացքին, խօսք առաւ եկեղեցւոյ Յովիւ՝ Արժ. Տ. Յրանդ Ա. Քհնյ. Երեցեան, որ այս առթիւ յանուն Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մեծ ընտանիքին, բարի գալուստ մաղթեց բոլորին, շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Յօր, որ իր օրհնաբեր այցելութեամբ եւ օրուան Ս. Պատարագի մատուցումով իր սիրոյն արժանացուց եւ խարախուսեց բոլորը. Յոգեշնորհ Յայր Պարթեւին, որ այս առթիւ ընկերակցելով Սրբազան Յօր մասնակցեցաւ եւ սպասարկեց Ս. Պատարագին, Թեմիս Ազգային վարչութեան անդաներուն՝ Տեարք Ճորճ Չորպաճեանին եւ Թորոս Բէչեճեանին, ինչպէս նաեւ՝ ներկայացուց

Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Երեսփոխանական կազմի անդամները, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին մեզ:

Ապա Սրբազան Հայրը իր գնահատանքը յայտնեց եկեղեցւոյ մեծ ընտանիքին, եւ յատուկ կերպով գնահատեց եկեղեցւոյ Տիկնանց միութեան վարչութիւնը եւ անդամները, կոչ ուղղելով բոլորին՝ համախմբուելու Եկեղեցւոյ շուրջ, եւ զարկ տալու մեր մեջ հոգեւոր եւ Ազգային ապրումներուն առաւել կենսաւորումին, ու միշտ իրարու շուրջ համախմբուելով յառաջ տանելու բոլոր աշխատանքները՝ ի նպաստ Օրէնճ Զառութիւնի գաղութի առաւել ծաղկումին:

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ արարողութիւնն ու սիրոյ ճաշը:

NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH CELEBRATED WITH EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH

On Sunday, April 3rd, 2011, the name day of Forty Martyrs Church in Orange County was celebrated with Episcopal Divine Liturgy and the blessing of *madagh*.

Divine Liturgy was celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also delivered the sermon and conducted the blessing of *madagh* ceremony.

Very Rev. Fr. Barthev Gulumian and Parish Pastor Archpriest Fr. Hrant Yeretzian assisted at the altar.

Prior to his sermon, the Prelate gave thanks to God for the opportunity to celebrate the name day of the church with the community, and invited the faithful to join him in praying for peace and harmony to all nations.

Given that the day before was the Feast of the Forty Martyrs, the Prelate's sermon focused on the lives and virtues of the forty martyrs who were martyred in the year 316 for their faith and allegiance to their Christian faith. He spoke of how Sepastia Lake became like a baptismal font for the martyrs, from where looking up to heavens they saw the Light which is Jesus Christ and received the strength to remain steadfast in their faith. That is how they became worthy of eternal life. Like the forty martyrs, we too must our lives with unflinching faith, incessant prayer, and unyielding devotion to God, said the Prelate.

The Prelate also spoke of the message given to us by the Sunday of the Judge, which is to pray without tiring. He emphasizes the importance of prayer as a means of cleansing our souls and bringing us closer to God, and as a medium through which we submit our needs to His will.

Following the service, requiem prayers were offered for the souls of all departed servants and sponsors of the church, after which the Prelate was led in a procession to "Gugasian" Hall for the blessing of *madagh*, which was prepared by the Parish Ladies Guild.

A luncheon followed at the hall. Rev. Fr. Hrant welcomed the guests and thanked the Prelate for conducting the day's services and celebrating with the community. He also thanked Fr. Barthev for participating in the services, and

Executive Council members Mrs. George Chorbajian and Mr. Toros Kejejian for their attendance. He then presented the newly elected Parish Board of Trustees and Delegates, and thanked them as well for their attendance.

In his message, the Prelate commended all the servants of the church, and especially the Ladies Guild for their hard work in preparing for the day. He invited all those in attendance to unite their efforts and work together for the splendor of the church and the community of Orange County.

The day's festivities came to a close with the Prelate's benediction.